ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 28-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-035-0020-0017 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՌԱՆԻ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ԵՎ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, ինչպես նաև հաշվի առնելով, որ մառանը,սանհանգույցը և անասնաշենքը դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, իսկ առկա օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 2001թվականի մայիսի 15-ը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի /06.08.2021թ. գործ թիվ ԼԴ2/0699/02/21/ վճիռը, <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը և Դսեղ գյուղի բնակիչ Արտաշես Աշոտի Թումանյանի /մուտք՝ 27.06.2022թ. թիվ 425 /դիմումը՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Արտաշես Աշոտի Թումանյանի /ծնված.28.08.1968թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 17 փողոց, թիվ 11 հասցեում գտնվող 06-035-0020-0017 ծածկագրի 0,1414 հա հողամասի և հողամասում 1968 թվականին կառուցված օժանդակ շինությունների՝ 37.20 քմ մակերեսով մառանի, 45,80 քմ մակերեսով անասնաշենքի և 1999թ. կառուցված 0,90 քմ մակերեսով սանհանգույցի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Անշարժ գույքը չի խախտում այլ անձանց իրավունքները և
օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով:
4. Հողամասն ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասում առկա 59,6քմ մակերեսով բնակելի տան պատերը գրանցել նշագծված տարբերակով:
6. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:
7. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 07.07.2022թ.N 184-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. փետրվարի 08
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 29-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղաքացի Ռաֆայել Գառնիկի Պարանյանի դիմումը,Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ 1328198 և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Ռաֆայել Գառնիկի Պարանյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ, քաղաք Թումանյան (ծած.06-004-023-000022) բնակելի տանը և բնակելի կառուցապատման հողամասին, մակերեսի չափը՝ 0,1834 հա տրամադրել նոր փոստային << Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան, 11-րդ փողոց, 9 բնակելի տուն>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2023թ. փետրվարի 13
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 30-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ.մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով քաղաքացի Վասիլի Ստեփանյանի դիմումը և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի վարչական տարածքում Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Լորուտ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-045-0178-0001 ծածկագրից առանձնացված 0,200054 հա մակերեսով անտառային նպատակային նշանակության անտառներ գործառնական նշանակության հողատեսքին տրամադրել << ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ.Լորուտ, 15-րդ փողոց, թիվ 7 հողամաս>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2023 թ. փետրվարի 13
ք.Թումանյան